ՍՑԵՆԱՐ
բաց դասի

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ 2015
թեմայով

Մասնակիցներ՝
1. ՃՇՀԱՀ Մ.Աբեղյանի անվան ավագ դպրոցի ՀՏ11 դասարանի աշակերտներ
2. Ուսուցիչներ

Համակարգող՝ ինֆորմատիկայի ուսուցիչ Զ.Գաբոյան

Ա.Մարգարյանի անվան համակարգչային դասարան, նոթբուքեր, պրոյեկտոր:

Ներկայացում պրեզենտացիա, վիդեո՝ համացանցի դրական, բացասական կողմերը, պատմական ակնարկ, հեռանկարները:

Համացանց կամ **ինտերնետ** (անգլ.՝ Internet), աշխարհով մեկ տարածված, հասարակության ազատ օգտագործման համար նախատեսված համընդհանուր ցանց է՝ կազմված համակարգչային ցանցերից, որոնք իրականացնում են տվյալների փոխանցում և փոխանակում:

Համացանցի հիմնական ծառայություններն են՝
1. WWW ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
2. E_MAIL -ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏ

Պատմական ակնարկ՝ (Հարությունյան Լյուդվիգ)
1969թ.-ի վերջին ստեղծվեց ARPANET-ը, որը ռազմական բնույթ էր կրում:
1972թ.-ին Ռեյ Թոմլիսոնը գործի դրեց առաջին կարևոր ծառայությունը՝ **էլեկտրոնային փոստը**:
1980 թ.-ի վերջին Գիտությունների Ազգային Հիմնադրամը NSF (National Science Foundation), որը կախված էր ամերիկյան վարչակարգից, գործարկում է գերհզոր հինգ համակարգչային կենտրոններ, որոնց օգտագործողները կարող էին կապվել՝ անկախ ԱՄՆ-ում գտնվելու իրենց վայրից:
1990-ականների սկիզբը նշանավորվեց Համացանցի ծնունդով, որպես վեբ (web)՝ HTML էջերի ամբողջությունը, որն ընդգրկում է տեքստ, հղումներ, նկարներ, URL հասցեներ՝ հասանելի HTTP հաղորդակարգով:

Վեբ մատակարարները
Լայնաշերտ ինտերնետի ծառայությունները դժվար հասանելիություն ունեցող տարածքները փորձում են դարձնել մատչելի:

- Առողջապահություն
- Համայնքային ծառայություն
- Կրթություն
- Մշակույթ (Սարգսյան Տիգրան)
- Սպորտ (Մարտիրոսյան Մարտին)
- Կոմերցիա և այլն:

Կրթություն և համացանց (Մովսիսյան Կարեն)
- Դպրոց և համացանց
- Ուսուցում և համացանց
- Աշակերտ և համացանց
- Ուսուցիչ և համացանց

Համացանցի վտանգները
1. Վիրուսներ (Մարտիրոսյան Նարեկ, Բարսեղյան Յան)
2. Ինֆորմացիայի գողություն (Թովմասյան Լիլիթ)
3. Կախվածություն (Սարդարյան Նարեկ)

Համացանցի առավելությունները, անհրաժեշտությունը, պահանջը (Խաչատրյան Անի)
1. Գիտելիքի անսպառ աղբյուր
2. Մասնագիտական զարգացում
3. Անսահմանափակ ինֆորմացիայի արագ ստացում
4. Կոնֆերանսներ
5. Օլիմպիադաներ
6. Մրցույթներ
7. Բացառիկ գրականության էլեկտրոնային հասանելիություն
8. Շփում՝ ընկերություն, համագործակցություն(Բալդրյան Ոսկան)

Հայաստան-Սփյուռք ամուր կապ համացանցի միջոցով (Զրաղացպանյան Սիրակ)
1. Պատմություն
2. Մշակույթ
3. Սպորտ

Համացանցի պաշտպանություն (Սարգսյան Սուրեն)
- Ցանցային կառավարիչներ
- Ծրագրավորողներ (Մովսիսյան Լևոն)

Հարցեր և պատասխաններ
Կարծիքներ

Խաչատրյան Անի

Համաշխարհային սարդոստայնը մեր օրերում շատ մեծ դեր ունի: Ժամանակակից մարդը չի կարող պատկերացնել իր կյանքը առանց համացանցի: Ներկայումս մարդիկ ավելի տեղեկացված են, քան 100 տարի առաջ: Հենց տեղեկատվության պակասի պատճառով էր, որ հայ ժողովրդի հետ տեղի ունեցավ 1915թ. ոճրագործությունը: Իր առավելությունների հետ մեկտեղ այն ունի բացասական կողմեր: Սակայն, եթե ինտերնետը գտնվում է գիտակից մարդու ձեռքում, այն դառնում է աշխարհի հրաշալիքներից մեկը: Ինտերնետի առավելություններն ինձ համար գերազանցում են թերություններին: Դրանով ես ծանոթանում եմ աշխարհի ցանկացած վայրում ինձ հետաքրքրող իրադարձություններին ու երևույթներին: Աշխարհն ինձ համար դառնում է հասանելի:

Ապրեք, սիրեք, վայելեք կյանքը, չէ որ այն հիասքանչ է:

Թովմասյան Լիլիթ

Ներկայումս ինֆորմացիայի գողությունը շատ տարածված երևույթ է: Այն սկսվում է անհատից և ավարտվում է միջազգային մակարդակում:

Համացանցը այն վայրն է, որտեղից կարելի է իմանալ անձի մասին բազմաթիվ տեղեկություններ: Ոմանք այդ տեղեկությունները կարող են օգտագործել անհատի դեմ:

Իսկ ինչպե՞ս վարվել: Չօգտվե՞լ համացանցից:

Իհարկե ոչ, ուղղակի պետք է իմանալ, թե ինչպես ճիշտ օգտվել համացանցից և ինչ տեղեկություններ հայտնել, որոնք չուղղվեն մեր դեմ: Նույնը պետք է իրագործել իրական կյանքում:

Խիստ գաղտնի ինֆորմացիաները պետք է լինեն լավ պաշտպանված: Դրա համար պետք է օգտագործել դժվար հասանելի գաղտնաբառեր:

Մենք պետք է տեղեկացված լինենք, որ գոյություն ունեն այսպիսի երևույթներ, որպեսզի կարողանանք պաշտպանվել:

Ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Հ. Ալեքսանյան

Համացանցի կիրառություն հանրակրթական դպրոցի ուսուցման համակարգ ներմուծվեց շատ արագ և հախուռն, որն ուներ իր դրական և բացասական կողմերը: Դրական էին հանդիսանում հետևյալը՝

1. Ցանկացած առարկայի ուսուցում կարելի է կազմակերպել համացանցի միջոցով, որտեղ տվյալ թեմայի վերաբերող շատ ինֆորմացիա գոյություն ունի: Այդ նյութերը դասակարգելով և օպտիմիզացնելով դասի պրոցեսի ռեալ

ժամանակին համապատասխան այն կարելի է վերածել լրացուցիչ նյութի՝ audio, video ֆորմատով,որոնք դասի ժամանակ կարելի է համակարգչով ցուցադրել:

2. Այդ աշխատանքները հանձնարարել աշակերտներից յուրաքանչյուրին:

Սարգսյան Սուրեն

Համակարգչային պաշտպանություն:

Համակարգիչը դժգոհ աշխատողներից, հակերներից, վիրտուալ գողությունից, վիրուսներից, լրտես ծրագրերից և առցանց <<գիշատիչներից>> պաշտպանելու համար անհրաժեշտ է տվյալները պահեստավորել ապահով և անվտանգ այնպիսի վայրում, ուր կողմնակի անձինք սահմանափակ մուտք ունեն: Վիրուսներից ու լրտես ծրագրերից պաշտպանվելու համար ամենահուսալի եղանակը ճանաչված ընկերությունից ձեռք բերված հակավիրուսային կամ հակալրտեսային ծրագրերի տեղադրումն է համակարգչում: Այս ծրագրերը կարող են ստուգել վիրուսների և լրտես ծրագրերի առկայությունը համակարգչի հիշողությունում և կանխել նորերի մուտքը համակարգիչ:

Անհրաժեշտ է նաև պարբերաբար արդիացնել հակավրրուսային և հակալրտեսային ծրագրերը, որպեսզի դրանք կարողանան ճանաչել նոր վիրուսներն ու լրտես շրագրերը: Նաև կարելի է կանխել այդ ամենը հրապատի միջոցով:Հրապատը հնարավորություն է տալիս զտել համացանցի հոսքը նախքան այն կհասնի համակարգիչ կամ մասնավոր ցանց: Այն ապահովում է նաև հակերներից և վիրուսներից:

Կարծիքներ են արտահայտել ուսուցիչներ՝
Անգլերենի- Լ. Մովսիսյանը
Ռ. Լեզվի և գրականության- Ե. Զաքարյանը
Գործավար- Լ. Մեյմարյանը
Հ. Լեզվի և գրականության- Ս. Շիտիկյանը
Կենսաբանության և գրադարանավարուհի- Գ. Եփրեմյանը
Ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի- Ռ. Վարդանյանը
Ինֆորմատիկայի- Հ. Ալեքսանյանը
Ամփոփեց՝ ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Զ. Գաբոյանը: